ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՅԼՈՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԱՐՄԵՆԻ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՃՄԱՆ ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ»

ԺԲ.00.01 մասնագիտությամբ - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АСМИК АРМЕНОВНА ЛЕЙЛОЯН

ПРАВОВЫЕ-ФИЛОСОФСКИЕ АСПЕКТЫ ПРЕВРАЩЕНИЯ ПРАВА ИЗ ВОЗМОЖНОСТИ В ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 – "Теория и история права и государства; история учений о праве и государстве"

ЕРЕВАН-2025

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արթուր Գրիշայի Վաղարշյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Գևորգ Բալաբեկի Դանիելյան

իրավ. գիտ. թեկնածու, դեցոնտ
Հայկ Սամսոնի Մարտիրոսյան

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հունվարի 21-ին ժ. 14^{30}-ին ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի դեկտեմբերի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор
Артур Гришаевич Вагаршян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Геворг Балабекович Даниелян

кандидат юрид. наук, доцент
Айк Самсонович Мартиросян

Ведущая организация: **Образовательный комплекс министерства внутренних дел РА**

Защита состоится 21 января 2026 года в 14^{30} часов на заседании Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 17 декабря 2025 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: «Հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները լայնորեն օգտագործվում են, թե՛ առօրյա և թե՛ գիտական մտածողության շրջանակներում: Գիտական հետազոտություններում դրանք մեծամասամբ ներկայացվում են որպես փիլիսոփայական կամ դիալեկտիկական կատեգորիաներ, որոնք լինելով իրերի և երևույթների իմացաբանական մեթոդներ, իրենց վերաիմաստավորումն են գտնում որոշակի գիտություններում և գիտակարգերում: Իրավագիտությունն այդ իմաստով ևս բացառություն չէ: Իրավագիտության առարկային վերաբերվող տեսական և գործնական, իմացաբանական և մեթոդաբանական խնդիրների ուսումնասիրության գործընթացներում դիալեկտիկական կատեգորիաների կիրառումն այդ խնդիրների հաջող լուծման անհրաժեշտ և կարևոր պայման է: Հետևաբար, իրավունքի բուն էության մեջ ներթափանցելու, իրավական երևույթները և գործընթացները խորապես բացահայտելու, ինչպես նաև հասարակության իրավական կյանքի օրինաչափություններն ուսումնասիրելու նպատակով՝ իրավագիտությունում ևս անխուսափելիորեն օգտագործում են գրեթե բոլոր փիլիսոփայական կատեգորիաները՝ էություն և երևույթ, բովանդակություն և ձև, կառուցվածք և տարրեր, պատճառ և հետևանք, անհրաժեշտություն և պատահականություն, հնարավորություն և իրականություն, նպատակ և միջոց, տեսական և գործնական, տրամաբանական և պատմական, քանակական փոփոխությունների անցումը որակականի և այլն:

Սույն հետազոտության թեմայի շրջանակում ներառված են «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները, քանի որ դրանց միջոցով հնարավոր է դառնում իրավունքը դիտարկել շարժման մեջ և հստակ մատնանշել տեսականի՝ որպես հնարավորության և փորձնականի՝ որպես իրականության վերածման գործընթացն իրավունքում: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս վեր հանելու իրավական երևույթների և իրողությունների զարգացման օրինաչափությունները և ըստ այդմ՝ նախագծելու իրավակարգի ամրապնդման, իրավակարգավորման արդյունավետ կառուցակարգերի ներդրման կամ իրավունքի և օրենքի կենսագործման արդյունավետության բարձրացման ուղիները կամ մեթոդաբանությունը, ինչն անշուշտ իրավունքի և պետության ընդհանուր տեսության և ընդհանրապես իրավագիտության արդի և հրատապ խնդիրներից է: Վերջինս հաշվի առնելով, հետազոտությունում դիտարկվող հասկացությունների ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում առկա իրական խնդիրների վերհանման և դրանց լուծման նոր ուղղիների բացահայտման տեսանկյունից: Մասնավորապես, հայրենական օրենսդրության մեջ, հատկապես ՀՀ Սահմանադրության մեջ, ինչպես նաև օրենսդրությունից դուրս՝ դեռևս ձևական սահմանում չստացած իրավական հնարավորությունների և դրանց առանձին տեսակների բացահայտումը և դրանց գիտական ուսումնասիրությունը, արդյունքում թույլ կտա գործնականում մատնանշել իրավական հնարավորության բովանդակության կենսագործման կամ նյութականացման փիլիսոփայական հիմքերը, առումները, պայմանները, ինչպես նաև դրանց՝ իրավական իրականության

վերածման գործընթացի խթանման որոշ լծակները:

Ատենախոսական հետազոտության արդիականության տեսանկյունից մեր կողմից ընտրված թեման ունի նաև մեկ այլ կարևոր մեթոդաբանական նշանակություն, այն նպատակ է հետապնդում հետազոտության առարկայի շրջանակներում առավել համալիր ընդգծել և կարևորել իրավունքի փիլիսոփայության և իրավական պրակտիկայի փոխհարաբերության առումները, ինչպես նաև այդ փոխհարաբերության էությունը բացահայտելու և խորապես ըմբռնելու տեսական և գործնական անհրաժեշտությունը:

Չնայած նրան, որ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները իրավագիտության, մասնավորապես իրավունքի և պետության ընդհանուր տեսության և իրավունքի փիլիսոփայության համար ունեն հիմնաքարային և մեթոդաբանական արժեքավոր նշանակություն և արտասահմանյան որոշ հեղինակներ ունեն թեմային նվիրված աշխատություններ, պետք է արձանագրենք, որ հայրենական իրավաբանական դոկտրինում բացակայում են նմանօրինակ աշխատություններ կամ թեմայի նվիրված համալիր հետազոտություն:

Հաշվի առնելով վերոգրյալ և մի շարք այլ փաստարկներ՝ սույն ատենախոսական հետազոտությունը նվիրվել է իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման իրավափիլիսոփայական առումներին՝ նպատակ ունենալով թեմայի մշակման և զարգացման գործում ունենալ գիտական ներդրում:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն «իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» դիալեկտիկական կատեգորիաներն են և դրանց վերածման իրավափիլիսոփայական առումները:

Հետազոտության առարկան ներառում է «հնարավորություն» և «իրականություն» իրավափիլիսոփայական կատեգորիաների վերաբերյալ առկա տարաբնույթ մոտեցումների, դրանց արդյունքում մեկ միասնական մոտեցման մշակման հնարավորության, այնուհետև, իրավունքում կամ իրավական երևույթներում տվյալ կատեգորիաների դրսևորման, սահմանման, փոխհարաբերության և կիրառման առանձնահատկությունների, իրավական հնարավորությունների դասակարգման, ընտրության և առանձին տեսակների, ինչպես նաև իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանի և կառուցակարգի մեթոդաբանության հիմնահարցերի ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակն է՝ «հնարավորություն» և «իրականություն» փիլիսոփայական կատեգորիաների համապարփակ տեսական-իրավական վերլուծությունն իրավունքի համատեքստում, դրանց հասկացության, էության, բովանդակության, տեսակների, փոխազդեցության, իրավական երևույթներում յուրահատուկ դրսևորման ձևերի բացահայտումը, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման գործընթացի և պայմանի վերհանումը, ինչպես նաև իրավական հնարավորությունների ավելի արդյունավետ կենսագործման կամ իրավական իրականության վերածման այլ առումների իրավափիլիսոփայական վերլուծությունը:

Ատենախոսական հետազոտության ընտրված թեմայի բովանդակու-

թյանը և շրջանակին համապատասխան որոշված նպատակին հասնելու համար առաջարկվել են հետազոտական հետևյալ խնդիրները.

ա) դիտարկել «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները՝ որպես դիալեկտիկական կապի մեջ գտնվող փիլիսոփայական կատեգորիաներ, և բացահայտել դրանց էությունն ու բովանդակությունը, իմացաբանական բնույթը և առանձնահատկությունները,

բ) վերլուծելով «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից առաջադրված տարաբնույթ և որոշ դեպքերում հակասական փիլիսոփայական բնորոշումները, ձևակերպել այդ հասկացությունների լայն և/կամ նեղ սահմանումները,

գ) բազմակողմանիորեն բացահայտել «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների բովանդակությունը և փոխհարաբերությունները իրավունքի և իրավական երևույթների համատեքստում,

դ) համեմատական վերլուծության ենթարկել «իրավական իրականություն» («действительность» - “reality”) հասկացության հետ հաճախակի նույնացվող՝ «իրավական վավերականություն կամ գործողություն» («валидность» - “validity”), «իրավական արդյունավետություն» («действенность» - “effectiveness/force”) և «իրավական իրողություն» (реальность - the real life) հասկացությունները, ինչպես նաև մի շարք տեսաբանների մոտեցումների վերլուծության արդյունքում տալ «իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» հասկացությունների նոր սահմանումները,

ե) հիմնավորել իրավական հնարավորությունների դասակարգման անհրաժեշտությունը, մեթոդաբանական նշանակությունը, վեր հանել իրավական հնարավորությունների տեսակները, առանձին տեսակների բովանդակությունը/առանձնահատկությունները,

զ) կատարել իրավական հնարավորությունների առանձին տեսակների, մասնավորապես՝ առանցքային նշանակություն ունեցող ընդհանուր (վերացական), իրական և ձևական իրավական հնարավորությունների իրավական – տեսական վերլուծություն՝ մատնանշելով կոնկրետ իրավական երևույթների շրջանակներում իրավական պրակտիկայի և տեսության մեջ առկա կարևոր հիմնախնդիրները,

է) վերլուծել իրավունքի հնարավորությունից իրականության վերածման կառուցակարգի հետազոտության մինչ այժմ գոյություն ունեցող մեթոդաբանությունը և ընտրել մեթոդաբանական այն գործիքակազմը, որն առավել հնարավորություններ կընձեռնի իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հիմնախնդրի լուծման համար,

ը) դիտարկել «իրավունքի կենսագործում» հասկացությունն իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման գործընթացի շրջանակներում և քննարկման առարկա դարձնել իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանի հիմնահարցը՝ վեր հանելով և նկարագրելով այդ պայմանը կամ պայմանները:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը: Ատենախոսական հետազոտության թեմայի մաս կազմող «հնարավորություն» և «իրականություն» կատեգորիաներն ավելի

մանրակրկիտ մշակվել և ուսումնասիրվել են փիլիսոփայական գիտության կողմից: Բացի այդ, տվյալ կատեգորիաների համընդհանուր բնույթը թույլ է տալիս ասել, որ դրանք այս կամ այն կերպ դիտարկվել են գրեթե բոլոր փիլիսոփայական համակարգերի շրջանակներում՝ սկսած անտիկ դարաշրջանից, մինչ մեր օրերը: Այս տեսանկյունից թեմային նվիրված աշխատությունները տարաբնույթ են և աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ, որի հեղինակների պատկերը մանրամասն ներկայացված է հաջորդիվ՝ հետազոտության տեսական հիմքերի առաջին խմբում:

Ինչ վերաբերվում է իրավաբանական դոկտրինային, ապա այստեղ հետազոտության խորությունը, կարծում ենք, բավարար չէ: Մասնավորապես, արտասահմանյան իրավաբան–տեսաբանների շրջանում իրավական ոլորտում դիտարկվող հնարավորությանը և իրականությանը նվիրված են եզակի աշխատություններ, իսկ հայրենական իրավաբան–տեսաբանների շրջանում տվյալ թեմային նվիրված համալիր հետազոտություններ կամ աշխատություններ ընդհանրապես բացակայում են:

Արտասահմանյան իրավաբան–տեսաբանների աշխատություններում, իրավական ոլորտում «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների տարբեր առումներն ուսումնասիրության առարկա են դարձրել հետևյալ հեղինակները՝ Դ. Ա. Կերիմովը, Ա. Վ. Վիսսարովը, Ն. Ի. Մատուզովը, Ն. Վ. Ուշանովան, Վ. Վ. Կոժևնիկովը, Վ. Մ. Սիրիխը, Ա. Վ. Պետրովը, Լ. Ս. Յավիչը, Ն. Ռեշերը, համահեղինակներ Վ. Մ. Բարանովը, Վ. Բ. Պերշինը և Ի. Վ. Պերշինան:

Ինչպես ցույց է տալիս վերոգրյալ հեղինակների աղբյուրների վերլուծությունը, իրավունքի և պետության ընդհանուր տեսության մեջ բացակայում է իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հիմնախնդրի լուծման կամ դրա իրավափիլիսոփայական տարբեր առումներին նվիրված համալիր հետազոտություն:

Հետազոտության տեսական հիմքերը: Հետազոտության նպատակով և խնդիրներով պայմանավորված՝ իրականացվել է անցյալի խոշորագույն և ժամանակակից ականավոր փիլիսոփաների աշխատությունների բնագրերի վերլուծություն, ինչպես նաև տեսական իրավական գրականության լայնածավալ հետազոտություն, այդ թվում՝ օտարերկրյա և հայ իրավաբան հեղինակների զանազան բնույթի գիտական հրապարակումները: Արդյունքում հետազոտության տեսական հիմքերը պայմանական կարող ենք բաժանել երեք հիմնական խմբերի:

Առաջին խմբի մեջ ներառված են փիլիսոփաներ կամ իրավաբան–փիլիսոփաներ, որոնք իրենց աշխատություններում, այս կամ այն, կերպ անդրադառձել են «հնարավորություն» և «իրականություն» իրավափիլիսոփայական կատեգորիաներին, մասնավորապես՝ Արիստոտելը (մ. թ. ա. 384 - մ. թ. ա. 322), Գ. Վ. Լայբնիցը (1646-1716 թթ.), Ի. Կանտը (1724-1804 թթ.), Գ. Վ. Ֆ. Հեգելը (1770-1831 թթ.), է. Հուսերլը (1859-1938 թթ.), Ժ. Պ. Սարտրը (1905-1980 թթ.), սկանդինավյան իրավական ռեալիզմի ներկայացուցիչ, դանիացի Ալֆա Ռոսսը, ժամանակակիցներ Յ. Վ. Հ. Հոլտերմանը, Ս. Ինգը, Մ. Ն. Էպշտեյնը, Ն.

Ռեշերը, Ռ. Ալեքսին, Ն. Ս. Վասիլևան, Ի. Լ. Չեստնովը, Ն. Վ. Վառլամովան, Ա. Ն. Կնիգինը, Լ. Ն. Սուվորովը, Գ. Դ. Լևինը, Մ. Ա Պարնյուկը, Ա. Ս. Կիրիլյուկը, Ն. Ի. Շիշլյաննիկովը, Ի. Ի. Գոլովինը, Լ. Պ. Դովժենկոն, Ս. Ա. Էլիզեևան, Ա. Ե. Ֆուրմանը և մի շարք այլ հեղինակներ:

Հետազոտության տեսական հիմքերի երկրորդ խումբը կազմում են այն իրավաբան գիտնականները, որոնց մտքերի ուսումնասիրությունը և վերաիմաստավորումը հիմք է հանդիսացել «իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» հասկացությունների փոխհարաբերության առումների բազմակողմանի դիտարկման, ինչպես նաև իրավական հնարավորությունների առանձին տեսակների բովանդակության բացահայտման և դրանց տեսաիրավական վերլուծության համար: Այդպիսիք են՝ Ա. Վ. Վիսսարովը, Տ. Բ. Էվլամպիևան, Դ. Ա. Կերիմովը, Վ. Մ. Սիրիխը, Ն. Ի. Մատուզովը, Ն. Վ. Ուշանովան, Ա. Վ. Պետրովը, Վ. Վ. Կոժևնիկովը, Ի. Ա. Շիպիլովը, Օ. Է. Լեյստը, Օ. Ա. Կրասավչիկովը, Ի. Ա. Իլինը, Վ. Մ. Բարանովը, Վ. Բ. Պերշինը և Ի. Վ. Պերշինան, Լ. Ս. Յավիչը, Ի. Ս. Լապշինը, Ա. Ա. Պիոնտկովսկին, Ռենե Դավիդը, Վ. Դ. Զորկինը, Օ. Վ. Պավլիշինը, Է. Ա. Ֆլեյշիցը, Ծ. Ա. Յամպոլսկայան, Ն. Մ. Կորկունովը, Ա. Մ. Նեչաևան, Օ. Օ. Միրոնովը, Ա. Վ. Եմելինը, Վ. Կ. Անդրեևը, Ս. Ի. Արխիպովը, Յ. Ի. Գրեվցովը և այլն:

Հետազոտության տեսական հիմքերի երրորդ խմբի մեջ մտնում են բոլոր այն հեղինակների՝ իրավունքի և պետության ընդհանուր տեսության տարբեր առումների և հիմնախնդիրների, ինչպես նաև հասարակության ուսումնասիրությանը նվիրված, հիմնարար աշխատությունները, որոնք ունեն ոչ միայն տեսական նշանակություն, այլ նաև հանդիսացել են մեթոդաբանական ուղեցույց ատենախոսության թեմայի մշակման և իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի խորքային վերլուծության համար: Մասնավորապես, այդ աշխատությունների հեղինակներն են՝ Ռոնալդ Դվորկինը, Դեյվիդ Դյուաքինը, Բրյուս Աքերմանը, Ա. Ս. Շավուրովը, Վ. Մ. Կորելսկին և Վ. Դ. Պերեվալովը, Այն Ռանդը, Թ. Սմիթը, Վ. Մ. Սիրիխը և Ա. Բ. Օմիրխանիվիչը, Մ. Ն. Մարչենկոն, Ս. Ս. Ալեքսեևը, Ա. Ի. Վասիլենկոն, Մ. Վ. Մակսիմովը, Ն. Մ. Չիստյակովը, Ն. Ի. Մատուզովը և Ա. Վ. Մալկոն, Պ. Մ. Ռաբինովիչը և Գ. Գ. Շմելեվան, Վ. Ս. Ներսիսյանցը, Ա. Գ. Վաղարշյանը, է. Ա. Հարությունյանը, Ն. Գ. Դավթյանը, Գ. Գ. Հարությունյանը, Լ. Տ. Բակուլինան, Վ. Վ. Լազարևը և Ս. Վ. Լիպենը, Ռ. Տ. Մուխաևը, Ռ. Ա. Ռոմաշովը, Օ. Ֆ. Սկակունը, Վ. Ն. Պրոտասովը, Ե. Գ. Շուկշինան, Մ. Մ. Ռասսոլովը, Վ. Ի. Լեուշինը, Ա. Ս. Պիգոլոկինը, Ա. Ն. Գոլովիստիկովան, Յ. Ա. Դմիտրիևը, Ա. Խ. Սաիդովը, Վ. Վ. Օսկամիտնին, Ն. Գ. Վեգերովը, Վ. Ն. Դմիտրյուկը, Ա. Գ. Բրատկոն, Կ. Բ. Տոլկաչևը, Դակիոն Կ. Դրագոսը և Բոգդանա Նեամտուն և այլոք:

Հետազոտության իրավական կամ փորձառական հիմքերը: Հետազոտության նպատակով և խնդիրներով պայմանավորված՝ վերջինիս իրավական կամ փորձառական հիմքերն են կազմում Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը, ՀՀ Սահմանադրությունը, հայրենական և արտասահմանյան օրենսդրության վերաբերելի իրավադրույթները, ինչպես նաև գործնական ուղղվածությամբ մի շարք

գիտական հոդվածներ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության առարկայով և խնդիրներով պայմանավորված՝ վերջինիս մեթոդաբանական հիմքերը, նախ, կազմում են համապատասխան դիալեկտիկական կատեգորիաները, այնուհետև՝ համընդհանուր փիլիսոփայական (դիալեկտիկական, մետաֆիզիկական, արժեքաբանական), համագիտական (ինդուկցիա, դեդուկցիա, անալոգիա, անալիզի, սինթեզ, ընդհանրացում, պատմական, համեմատական, նկարագրողական, կառուցվածքագործառութային և այլն) և մասնավոր-գիտական (ձևական-տրամաբանական, ձևական-իրավաբանական, համեմատահիրավական, համակարգային և այլն) մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության նպատակով և խնդիրներով պայմանավորված՝ վերջինիս գիտական նորույթը հանգում է հետևյալին.

ա) հաշվի առնելով արտասահմանյան փիլիսոփայական և/կամ իրավաբանական դոկտրիններում կատարված ուսումնասիրությունները, հայրենական իրավաբանական դոկտրինում առաջին անգամ և նորովի իրականացվել է իրավունքի շրջանակներում «հնարավորություն» և «իրականություն» հասկացություններին և դրանց տարբեր առումներին նվիրված համալիր հետազոտություն,

բ) վերահիմաստավորվել է «հնարավորություն» և «իրականություն» փիլիսոփայական հասկացությունների վերաբերյալ տարբեր հեղինակների, այդ թվում հանրաճանաչ փիլիսոփաների մոտեցումները, և արդյունքում տրվել է դրանց հասկացությունների լայն և նեղ հեղինակային սահմանումները, հստակ մատնանշելով այն առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս տարբերակել տվյալ հասկացությունները այլ համանման, սակայն բովանդակային իմաստով տարբերվող հասկացություններից և տրամաբանական կառույցներից,

գ) հիմնավորվել և առաջ է քաշվել իրավական հնարավորությունների դասակարգման որպես մեթոդի կիրառման անհրաժեշտության վերաբերյալ թեզը, այդ համատեքստում առանձին իրավական երևույթների շրջանակներում համապարփակ քննարկման և տեսահիրավական վերլուծության են ենթարկվել իրավական հնարավորությունների տեսակները, մասնավորապես առանցքային նշանակություն ունեցող ընդհանուր (վերացական), իրական և ձևական իրավական հնարավորությունները,

դ) առաջ է քաշվել իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի մեթոդաբանական այն գործիքակազմը, որի շնորհիվ իրավունքը հնարավորությունից վերածվում է իրականության, ինչպես նաև առանձին քննարկման առարկա են դարձել իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանի և դրա շրջանակում իրավունքի կենսագործման հիմնահարցերը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. «Հնարավորություն» և «իրականություն» փիլիսոփայական հասկացությունների վերաբերյալ բոլոր այն մոտեցումները, որոնցում հնարավորությունը դիտարկվում է որպես կեցությանը կամ իրականությանը

նախորդող և վերջինիս «մաքուր» հնարավորությունը հանդիսացող երևույթ, կամ որոնցում իրականությունը նախորդում է հնարավորությանը, բավարար չափով հիմնավորված չեն: «Հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները չպետք է դիտարկվեն միմյանցից անկախ, իսկ դրանց էությունը և բովանդակությունը համալիր կարող են բացահայտվել միայն այնպիսի փոխհարաբերության մեջ, որտեղ իրականությունը հանդես է գալիս որպես ձև կամ տեսական հարթություն, որին գալիս է լրացնելու հնարավորությունը՝ որպես նյութ (մատերիա) կամ փորձնական հարթություն: Հաշվի առնելով, որ մենք գործ ունենք դիալեկտիկական կատեգորիաների հետ և համապատասխան հնարավորությունների առկայության և վերածման պարագայում՝ անվերջ իրար հաջորդող իրականությունների հետ, նպատակահարմար չէ առաջնայնություն տալ դիտարկվող կատեգորիաներից որևէ մեկին:

2. Իրավունքի համատեքստում «իրականություն» հասկացությունը համապարփակ բացահայտվում է «իրավական իրականություն» («действительность» - “reality”) և դրա հետ հաճախակի նույնացվող՝ «իրավական վավերականություն կամ գործողություն» («валидность» - “validity”), «իրավական արդյունավետություն» («действенность» - “effectiveness/force”) և «իրավական իրողություն» (реальность - the real life) հասկացությունների բովանդակային իմաստների հստակ տարբերակման միջոցով: Անհրաժեշտ է հստակ տարբերակել գոյություն ունեցող իրավունքն իր կենսագործումից կամ իրավունքի օբյեկտիվ (իրական) կեցությունը իրավական իրականությունից: Առաջինի դեպքում մենք գործ ունենք իրավական իրողության հետ, իսկ երբ իրավունքը կամ իրավական երևույթներն արդյունավետորեն կենսագործվում են՝ վերածվելով փորձնականի, մենք առնչվում ենք իրավական իրականության հետ:

Արդյունքում, իրավական իրականությունը իրավունքի էության դրսևորման, իրավունքի օրինաչափությունների կենսագործման, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության արտացոլման ձև է: Այլ կերպ ասած՝ իրավական իրականությունը կազմում է իրավական համակարգի նյութականացված մասը:

3. «Իրավական հնարավորություն» հասկացությունը լայն իմաստով նպատակահարմար է գնահատել՝ որպես իրավական իրականության մեջ գոյություն ունեցող և դրա զարգացման միտումները մատնանշող իրավունքի օբյեկտիվ հատկություն, որն իր բովանդակության մեջ կրում է բոլոր այն սոցիալական և իրավական նախադրյալները և/կամ պայմանները, որոնք անհրաժեշտ են իրավունքին՝ հնարավորությունից իրականություն վերածման համար: Նեղ իմաստով, «իրավական հնարավորություն» հասկացությունը, ըստ էության, նույնանում է սուբյեկտիվ իրավունքների հետ և հանդես է գալիս, միայն որպես իրավունքի դիսպոզիտիվության իրավական բովանդակություն:

4. Իրավունքի համատեքստում «հնարավորություն» և «իրականություն» կատեգորիաների փոխհարաբերության հիմնախնդիրը կարելի է քննարկել տարբեր առումներով, բայց և այնպես, գոյաբանական տեսանկյունից, կարծում ենք, հիմնավորված չէ իրավական նորմը նույնացնել դրանում պարունակվող հնարավորությունների հետ: Ատենախոսությունում

հիմնավորվել է, որ գոյաբանական տեսանկյունից ինքնին իրավունքը կամ իրավական նորմը հնարավորության և իրականության միասնություն է, քանի որ արտացոլելով իրականությունը՝ վերջինս իր մեջ ամրագրում է նաև հնարավորը, այլ կերպ ասած՝ պարունակում է ինչպես «գոյության» («сущее»), այնպես էլ «պիտոյի» («должное») օրգանական տարրերը: Այս տեսանկյունից իրավունքը հասկանում ենք արիստոտելյան պատկերացմամբ՝ իրականության մի դրվագ: Բացի այդ, հաշվի առնելով իրավունքի սոցիալական բնույթը և այն, որ իրավունքն արտացոլում է հասարակական կյանքի պահանջմունքները, արդարացված ենք համարում նաև այն մոտեցումը, համաձայն որի՝ իրավական հնարավորությունը ստեղծում է սոցիալական իրականությունը և կենսագործվում է վերջինում՝ վերածվելով իրականության:

5. Իրավական հնարավորությունների դասակարգման անհրաժեշտության հիմքը դրա տեսական և գործնական կարևոր նշանակությունն է, մասնավորապես՝ իրավունքի արդյունավետ կենսագործման, մարդու իրավունքների և ազատությունների ապահովման, կյանքի հրատապ խնդիրների լուծման իրավական ուղիների և/կամ միջոցների առաջադրման և բազմաթիվ այլ առումները: Սա պայմանավորված է իրավական հնարավորության առաձին տեսակների (անհրաժեշտ և պատահական, իրական և ձևական, ընդհանուր (վերացական), մասնավոր և փաստացի) ընտրության, ինչպես նաև դրանց բովանդակության համալիր վերլուծության շրջանակում՝ իրավական երևույթների և իրողությունների զարգացման օրինաչափությունների, դրանց հիմքում ընկած իրավական նախադրյալների, պատճառների և արտաքին երաշխիքների վեր հանմամբ: Ըստ այդմ էլ հետազոտությամբ հնարավոր է դառնում անհրաժեշտ խորությամբ պարզելու իրավունքի և օրենքի արդյունավետ կենսագործման իրավական կառուցակարգերը և արդյունքում, կառավարելու այդ գործընթացն իրավակիրառ պրակտիկայում, համապատասխան հասարակական հարաբերություններում՝ առավել արդյունավետ իրավակարգավորման կառուցակարգեր ներդնելու եղանակով:

6. Իրավասուբյեկտությունը՝ որպես հավաքական կատեգորիա և առանձին իրավական երևույթ, ներառում է իրավունքներ և պարտականություններ ունենալու, դրանք ինքնուրույն իրականացնելու, սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելու ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ: Հետևաբար, իրավասուբյեկտությունը իրավունքի սուբյեկտ լինելու անձի հնարավորությունն (ունակությունն) է՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով, ինչից ելնելով էլ, կարող ենք եզրակացնել, որ «իրավասուբյեկտություն» հասկացության հիմքում ընկած է «հնարավորություն» իրավափիլիսոփայական կատեգորիան: Ավելին, իրավասուբյեկտության՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության տեսակի բովանդակությունը բացահայտվում է սուբյեկտիվ իրավունքների՝ որպես իրական իրավական հնարավորության տեսակ, բովանդակության հետ համեմատության և հակադրման եղանակով:

7. Վերոգրյալը հաշվի առնելով, իրավունակությունը և իրավագործունակությունը՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ, իրավունքի իրացման և տիրապետման անհրաժեշտ նախապայմաններ են և որևէ կերպ չեն կարող նույնացվել սուբյեկտիվ իրավունքների հետ, որոնք իրենց հերթին իրական իրավական հնարավորություններ են և տրված են բացառապես իրավունակությամբ օժտված իրավունքի սուբյեկտներին: Իրավունակությունը կամ իրավագործունակությունը և սուբյեկտիվ իրավունքները, ըստ էության, իրավական հնարավորության զարգացման տարբեր փուլեր են, որտեղ սուբյեկտիվ իրավունքը դրանց հաջորդող փուլն է: Այս մոտեցումը վերաբերելի է նաև իրավունքի սուբյեկտի իրավական պատասխանատվությանը («դելիկտունակություն» և «գործարքընդունակություն»):

8. Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգն ունի բարդ, բազմատարր, բազմաստիճան, և փոփոխական բնույթ, որի բացահայտումը կախված է իրավահասկացողությունից: Վերլուծելով իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի հետազոտության մինչ այժմ գոյություն ունեցող մեթոդաբանությունը, կարծում ենք, անհիմն են բոլոր այն մոտեցումները, որոնք հիմնվելով ձևական, լեգիստական – նորմատիվային իրավահասկացողության վրա, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը դիտարկում են միայն նեղ իմաստով, այն հանգեցնելով պաշտոնապես գոյություն ունեցող, գործող դրական (պոզիտիվ) իրավունքի կամ օրենքի կենսագործմանը: Կարող են ընդունելի և առաջադիմական համարվել իրավունքի և օրենքի տարբերակման վրա հիմնված այն հայեցակարգերը, որոնք ելնելով իրավաբանական (նաև խառը) տիպի իրավահասկացողությունից, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը վերլուծում են լայն իմաստով փիլիսոփայական դիրքերից, հաշվի առնելով իրավունքի էությունը, իրավունքի օբյեկտիվ պահանջները, կոնկրետ պատմական միջավայրում առկա պայմանները, ինչպես նաև իրավունքի սուբյեկտների գործուն դերը:

9. Իրավունքը՝ որպես հնարավորություն վերածվում է իրավական իրականության արդյունավետ կենսագործման միջոցով և միայն համապատասխան պայմանների ապահովման և/կամ առկայության պարագայում: Մասնավորապես՝ այդ պայմաններ են՝

ա) իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման առաջին և գլխավոր պայմանը իրավունքի էության կենսագործումն է իրավական երևույթներում, իսկ «իրավական իրականություն» և «իրավական հնարավորություն» կատեգորիաները բնութագրում են իրավունքի էության զարգացման դիալեկտիկան,

բ) իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման երկրորդ՝ ածանցյալ պայմանը համապատասխան իրավական նորմերի կամ օրենքների (որպես իրավունքի էության արտահայտության ձևի) արդյունավետ կենսագործման հիմնախնդիրն է, որը հանգում է, սակայն ամբողջովին չի լուծվում իրավաստեղծագողծության ընթացքում՝ իրական,

ձևական, ընդհանուր (վերացական), մասնավոր, փաստացի, անհրաժեշտ և պատահական իրավական հնարավորությունների տեսակների տեղին, ժամանակին բացահայտման և դրանց ճիշտ ընտրության միջոցով,

գ) բացի իրավաստեղծ գործունեությունից, իրավական հնարավորությունների բովանդակության ձևավորման և արդյունավետ կենսագործման վրա կարող են ազդել մի շարք օբյեկտիվ օրինաչափություններ և սուբյեկտիվ գործոններ, որոնք անկախ են իրավաստեղծագործողի կամքից (բայց և այնպես, իրավունքը հնարավորությունից իրականություն վերածվում է իրավական օրենքում իրավաստեղծագործության ձևով),

դ) իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կարևոր պայման է հանդիսանում իրավունքի սուբյեկտի կամքը, քանի որ, ե՞րբ և ի՞նչ ծավալով կենսագործել իրավական օրենքը որոշում է բացառապես իրավունքի սուբյեկտը, հետևաբար, կվերածվի արդյոք իրավունքը հնարավորությունից իրականության, ավարտական փուլում, կախված է իրավունքի սուբյեկտի կամքից,

10. Դրական իրավունքը (կամ իրավական օրենքը), արտահայտելով իրավունքի էության և հիմնարար սկզբունքների պահանջները, որպես իրավական հնարավորություն, իրականացվում է կամ վերածվում է իրականության իրավունքի սուբյեկտի կողմից գործողությունների և փաստական իրավաչափ վարքագծի միջոցով: Ինչ վերաբերվում է ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով իրավախախտումների նկատմամբ իրավական պատասխանատվության միջոցների կիրառմանը, ապա, դրանք չեն կարող դիտարկվել որպես իրավական հնարավորության բուն իրականացում, քանի որ դրանք զուտ միջոց են իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման գործընթացն ապահովելու համար:

11. Հաշվի առնելով իրավունքի սոցիալական բնույթը, իրավական օրենքը որպես իրավական հնարավորություն ունի իրականացման բարձր ունակություն և ապահովված է երաշխիքներով: Բայց և այնպես, իրավական նորմերով սահմանված իրավական հնարավորությունների արդյունավետ իրականացման համար ցանկալի է և առաջադիմական, որպեսզի իրականացմանն ուղղված գործողությունները և իրավաչափ վարքագիծն իրավունքի սուբյեկտի կողմից լինեն գիտակցված և կամային: Միևնույն ժամանակ, իրավունքի սուբյեկտի կողմից իրավական հնարավորությունը կարող է իրականացվել, նաև առանց որևէ ներքին կամ արտաքին շարժառիթների և գիտակցության բարձր աստիճանի՝ օրինակ, իրավունքի պահպանման ձևով, երբ իրավունքի սուբյեկտը դրսևորում է իրավաչափ վարքագիծ և արդյունքում տեղի է ունենում օրենսդիրի կողմից իրավական նորմով սահմանված նպատակի որպես իրավական հնարավորության իրականացում:

12. Իրավական օրենքը (կամ դրական իրավունքը) որևէ դեպքում չի կարող հնարավորությունից վերածվել իրականության իրավահարաբերությունից դուրս: Հիմք ընդունելով իրավահարաբերությունների մասին արդի տեսությունը և իրավունքի իրականացման հիմնական ձևերը (իրավունքի պահպանում, օգտագործում,

կատարում և կիրառում), իրավական նորմով սահմանված իրավական հնարավորությունը կենսագործվում է բացառապես իրավահարաբերություններում՝ իրավունքի իրականացման անմիջական և միջնորդավորված ձևերով՝ այդ թվում իրավունքի պահպանման ձևով:

Հետազոտության տեսական և գործնական-կիրառական նշանակությունը: Հետազոտության շրջանակներում կատարված ուսումնասիրության տեսական նշանակությունը, նախ և առաջ, նրանում է, որ ատենախոսության մեջ պարունակող հիմնական դրույթները, եզրակացությունները, պնդումները և դիտարկումները թույլ են տալիս բացահայտելու «հնարավորություն» և «իրականություն» դիալեկտիկական կատեգորիաները, ոչ միայն որպես իրավունքի ընկալման իրավափիլիսոփայական մեթոդներ, այլև որպես իրավական իրականության (կամ իրավական կեցության) որակական վիճակի կամ իրավունքի կենսագործման արդյունավետության վրա ազդող անմիջական գործոններ:

Հետազոտության շրջանակներում կատարված ուսումնասիրության գործնական-կիրառական նշանակությունն կայանում է նրանում, որ ատենախոսությունում կատարված հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ինչպես իրավաստեղծ և իրավակիրառ, այնպես էլ իրավահիրացնող գործունեության մեջ և նպաստել դրանց զարգացմանը: Օրինակ, իրավաստեղծ գործունեության մեջ նպաստել իրավական նորմերի կենսագործման տեսական արդյունավետությունը կանխատեսելու և գնահատելու համապատասխան մեթոդաբանություն մշակելուն, ինչը չափազանց կարևոր է իրավունքի գերակայության ամրապնդման, իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացման գործում:

Եվ վերջապես, հետազոտության շրջանակներում կատարված վերլուծությունների արդյունքները կարող են օգտագործվել իրավաբանական կամ փիլիսոփայական դոկտրինաներում իրականացվող հետագա գիտական հետազոտություններում, որոնցում, այս կամ այն կերպ, օգտագործվում են «հնարավորություն» կամ «իրականություն» դիալեկտիկական կատեգորիաները, ինչպես նաև այն դասընթացներում, որոնց առարկան առնչվում է տվյալ հասկացությունների, ինչպես նաև իրավունքի արդյունավետ կենսագործման կամ իրականացման գործընթացի, կառուցակարգի, պայմանների և հիմնախնդիրների հետ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում: Հետազոտության արդյունքները, հիմնական դրույթները և եզրահանգումները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված մի շարք գիտական հոդվածներում, որոնք 2022–2025թթ.-ի ընթացքում լույս են տեսել ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից սահմանված գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը պատրաստված և կազմված է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ատենախոսության ձևավորման ներկայացվող պահանջներին համապատասխան: Ատենախոսությունը բաղկացած է սահմանված ձևի

տիտղոսաթերթից, ներածությունից, երեք գլխից, որոնք ընդհանուր առմամբ պարունակում են ինը պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության՝ «Հնարավորություն» և «իրականություն» փիլիսոփայական կատեգորիաների հասկացության և փոխհարաբերության իրավաբանական հայեցակարգը» վերտառությամբ **առաջին գլուխը** բաղկացած է երեք պարագրաֆից:

«Հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների փիլիսոփայական բովանդակությունը» վերտառությամբ 1.1 պարագրաֆում՝ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները դիտարկվել են որպես դիալեկտիկական կապի մեջ գտնվող փիլիսոփայական կատեգորիաներ, որոնց իմացաբանական բնույթը, էությունն ու բովանդակությունը, ինչպես նաև առանձնահատկությունները բացահայտելու նպատակով, վերլուծվել են «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից առաջադրված տարաբնույթ և որոշ դեպքերում հակասական փիլիսոփայական բնորոշումներ: Կատարված հետազոտության արդյունքում, պարագրաֆում ձևակերպվել են այդ հասկացությունների լայն և/կամ նեղ սահմանումները:

«Հնարավորություն» և «իրականություն» փիլիսոփայական հասկացությունների կոնկրետացումն իրավունքի համատեքստում» վերտառությամբ 1.2 և **«Հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների դիալեկտիկական փոխհարաբերության հիմնական առումներն իրավունքում» վերտառությամբ 1.3 պարագրաֆներում** բազմակողմանիորեն ուսումնասիրվել են «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների բովանդակությունը, դրանց փոխհարաբերություններն իրավունքի և իրավական երևույթների համատեքստում: Համեմատական վերլուծության են ենթարկվել «իրավական իրականություն» հասկացության հետ հաճախակի նույնացվող մի շարք հասկացություններ, ինչպես նաև տարբեր տեսաբանների մոտեցումների վերլուծության արդյունքում առաջարկվել են «իրավական հնարավորություն» և «իրավական իրականություն» հասկացությունների նոր սահմանումները:

Երկրորդ գլուխը՝ «Իրավական հնարավորությունների դասակարգումը և առանձին տեսակների տեսաիրավական վերլուծությունը» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

«Իրավական հնարավորությունների տեսակները և դրանց բովանդակությունը» վերտառությամբ 2.1 պարագրաֆում հիմնավորվել է իրավական հնարավորությունների դասակարգման անհրաժեշտությունը, մեթոդաբանական նշանակությունը, վեր են հանել իրավական հնարավորությունների առանձին տեսակները՝ բացահայտելով այդ տեսակների բովանդակությունը և առանձնահատկությունները:

«Իրավասուբյեկտությունը որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն» վերտառությամբ 2.2 պարագրաֆում ուսումնասիրվել է իրավասուբյեկտությունը՝ որպես հավաքական կատեգորիա և առանձին

իրավական երևույթ, որը ներառում է իրավունքներ և պարտականություններ ունենալու, դրանք ինքնուրույն իրականացնելու, սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելու ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ: Իրավասուբյեկտության՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության տեսակի բովանդակությունը պարագրաֆում բացահայտվել է սուբյեկտիվ իրավունքների՝ որպես իրական իրավական հնարավորության տեսակի, բովանդակության հետ համեմատության և հակադրման եղանակով:

«Իրական և ձևական իրավական հնարավորությունները սահմանադրական իրավական նորմերում» վերտառությամբ 2.3 պարագրաֆում կատարվել է սահմանադրաիրավական նորմերի, որպես առանձին իրավական երևույթների շրջանակում առանցքային նշանակություն ունեցող ձևական և իրական իրավական հնարավորությունների վերաբերյալ իրավական – տեսական վերլուծություն, որի ընթացքում մատնանշվել են իրավական պրակտիկայի և տեսության մեջ առկա մի շարք կարևոր հիմնախնդիրներ:

Երրորդ գլուխը՝ «Իրավունքի կենսագործումը որպես հնարավորությունից իրականություն վերածման գործընթաց և պայմանավորվածությունն իրավահասկացողությամբ» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

«Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը իրավահասկացողության հիմնական տիպերի համայնապատկերում» վերտառությամբ 3.1 պարագրաֆում իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի հետազոտությունն իրականացվել է իրավահասկացողության մեթոդաբանական դիրքերից: Մասնավորապես՝ վերլուծելով իրավունքի հնարավորությունից իրականության վերածման կառուցակարգի հետազոտության մինչ այժմ գոյություն ունեցող մեթոդաբանությունը՝ առաջարկվել է իրավունքի և օրենքի տարբերակման մեթոդաբանական այն գործիքակազմը, որն առավել հնարավորություններ կընձեռնի իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հիմնախնդրի լուծման համար:

«Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանը և իրավունքի կենսագործումը» վերտառությամբ 3.2 պարագրաֆում ընտրված իրավահասկացողության մեթոդաբանական դիրքերից մանրամասն քննարկվել է իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանի հիմնահարցը, որի շրջանակներում դիտարկվել է «իրավունքի կենսագործում» հասկացությունը և համապատասխանաբար վեր են հանվել և նկարագրվել վերածման պայմանը կամ պայմանները:

«Իրավական օրենքի (կամ դրական իրավունքի) որպես իրավական հնարավորության կենսագործման/իրականացման որոշ առումները» վերտառությամբ 3.3 պարագրաֆը նվիրվել է իրավական օրենքի որպես իրավական հնարավորության արդյունավետ կենսագործման/իրականացման կառուցակարգի կարևոր հատկանիշների և դրա ապահովման որոշ առումների մանրամասն վերլուծությանը: Մասնավորապես՝ իրավունքի սուբյեկտի կողմից գործողությունների, փաստական իրավաչափ

վարքագծի և ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով իրավախախտումների նկատմամբ իրավական պատասխանատվության միջոցների եղանակով իրավական հնարավորությունների իրականացման և դրանց երաշխիքների հիմնահարցերին և այլն:

Ատենախոսության եզրակացությունում հանգել ենք ներքոշարադրյալ հետևությունների.

1. «Հնրավորություն» և «իրականություն» փիլիսոփայական հասկացությունների էության և բովանդակության վերաբերյալ անցյալի խոշորագույն մտածողների՝ փիլիսոփաների և արդի հեղինակների բազմատեսակ մոտեցումների վերլուծելության արդյունքում, գտնում ենք, որ «հնարավորություն» և «իրականություն» հասկացությունների վերաբերյալ բոլոր այն մոտեցումները, որտեղ հնարավորությունը դիտարկվում է որպես կեցությանը կամ իրականությանը նախորդող և վերջինիս «մաքուր» հնարավորությունը հանդիսացող երևույթ, կամ որտեղ իրականությունը նախորդում է հնարավորությանը՝ բավարար չափով հիմնավորված չեն:

«Հնարավորություն» և «իրականություն» հասկացությունները ցանկալի չէ դիտարկել միմյանցից անկախ: Դրանց էությունը և բովանդակությունը համալիր կարող են բացահայտվել միայն այնպիսի փոխհարաբերության մեջ, որտեղ իրականությունը հանդես է գալիս որպես ձև կամ տեսական հարթություն, որին գալիս է լրացնելու հնարավորությունը որպես նյութ (մատերիա) կամ փորձնական հարթություն: Հաշվի առնելով, որ գործ ունենք դիալեկտիկական կատեգորիաների հետ և համապատասխան հնարավորությունների առկայության և վերածման պարագայում՝ անվերջ իրար հաջորդող իրականությունների հետ, առաջնայնություն տալ դիտարկվող կատեգորիաներից որևէ մեկին նպատակահարմար չէ:

2. Վերոգրյալը նկատի ունենալով, իրականությունը լայն իմաստով բնորոշվում է, որպես համընդանուրի (այդ թվում նաև հնարավորության) օբյեկտիվ գոյության կամ նյութականացման ձև՝ իր անցյալի, ներկայի և ապագայի միասնությամբ: Նեղ իմաստով իրականությունը, կարծում ենք, պետք է դիտարկել հնարավորության հետ փոխհարաբերության և/կամ հակադրման եղանակով: Այստեղ, իրականությունը հանդես է գալիս, որպես դիալեկտիկական կատեգորիա և չի կարող դիտարկվել առանց հնարավորության, քանի որ հենց համապատասխան հնարավորության առկայության պարագայում է, որ իրականությունը ձեռք է բերում բովանդակություն և հնարավոր է դառնում իրականության վերածման գործընթացը:

3. Հնարավորությունն արդեն իսկ գոյություն ունի իրականության մեջ և հանդիսանում է հենց այդ նոր երևույթը՝ իր հավանական (պոտենցիալ) վիճակում: Արդյունքում հնարավորությունն իրականությունից բխող և վերջինիս մեջ գոյություն ունեցող իրականության վերածման և/կամ փորձում մարմնավորման կարողությունն է: Հանդիսանալով դիալեկտիկական կատեգորիա կամ մեթոդ՝ հնարավորությունը մատնանշում է իրականության զարգացման միտումները և իր բովանդակության մեջ կրում է բոլոր այն նախադրյալները և պայմանները, որոնք անհրաժեշտ են իրականության վերածման համար:

4. Իրավունքի համատեքստում «իրականություն» հասկացության

համապարփակ բացահայտման նպատակով՝ «իրավական իրականություն» («действительность» - “reality”) և դրա հետ հաճախակի նույնացվող «իրավական վավերականություն կամ գործողություն» («валидность» - “validity”), «իրավական արդյունավետություն» («действенность» - “effectiveness/force”), ինչպես նաև «իրավական իրողություն» (реальность - the real life) հասկացությունների բովանդակային իմաստների համեմատական վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել հետևյալը.

Իրավական վավերականությունը (կամ գործողությունը) իրավունքի ձևական կողմն է, որը մատնանշում է նորմատիվ իրական ակտի իրավական ուժը: Իրավական իրականությունը իրավական նորմերի գոյությունն է իրականության մեջ, բայց և այնպես, իր մեջ ներառում է կամ նույնանում է իրավական արդյունավետության հետ, քանի որ նորմի գոյությունը հենց դրսևորվում է դրա արդյունավետությամբ և առաջացրած իրավական հետևանքներով: Իրավական արդյունավետությունը իրավունքի կենսագործման հետևանքով առաջացած ազդեցությունը կամ ներգործողությունն է սոցիալական համակարգի վրա:

Ինչ վերաբերվում է իրավական իրողությանը, ապա, երբ խոսում ենք իրավական երևույթների իրական կամ օբյեկտիվ կեցության մասին, մենք գործ ունենք իրավական իրողության հետ, իսկ երբ իրավունքը կամ իրավական երևույթները կենսագործվում են՝ վերածվելով փորձնականի, մենք առնչվում ենք իրավական իրականության հետ: Արդյունքում, իրավական իրողության մեջ գոյություն ունեցող ոչ բոլոր իրավական երևույթներն են ունակ կենսագործվելու իրավական իրականության մեջ: Հետևաբար, անհրաժեշտ է հստակ տարբերակել գոյություն ունեցող իրավունքն իր կենսագործումից կամ իրավունքի օբյեկտիվ (իրական) կեցությունը իրավական իրականությունից:

5. Ուսումնասիրելով իրավաբանական գրականությունը և հանդիպելով «իրավական իրականություն» հասկացության վերաբերյալ տարաբնույթ և շատ ժամանակ հակասական բնորոշմների՝ իրավական իրականությունը, կարծում ենք, պետք է սահմանել, որպես իրավունքի էության դրսևորման, իրավունքի օրինաչափությունների կենսագործման, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության արտացոլման ձև: Այլ կերպ ասած՝ իրավական իրականությունը կազմում է իրավական համակարգի նյութականացված մասը:

Ինչ վերաբերվում է «իրավական հնարավորություն» հասկացությանը, ապա լայն իմաստով, գտնում ենք, որ այն պետք է հասկանալ՝ որպես իրավական իրականության մեջ գոյություն ունեցող և դրա զարգացման միտումները մատնանշող իրավունքի օբյեկտիվ հատկություն, որը իր բովանդակության մեջ կրում է բոլոր այն սոցիալական և իրավական նախադրյալները և/կամ պայմանները, որոնք անհրաժեշտ են իրավունքին՝ հնարավորությունից իրականություն վերածման համար: Նեղ իմաստով, «իրավական հնարավորություն» հասկացությունը, ըստ էության, նույնանում է սուբյեկտիվ իրավունքների հետ և հանդես է գալիս, միայն որպես իրավունքի դիսպոզիտիվության իրավական բովանդակություն:

6. Անդրադառնալով «հնարավորություն» և «իրականություն»

հասկացությունների փոխհարաբերության առումներին իրավունքում, արձանագրեցինք, որ գոյաբանական տեսանկյունից հիմնավորված չէ իրավական նորմը նույնացնել դրանում պարունակվող հնարավորությունների հետ, փոխարենը, գոյաբանական տեսանկյունից ինքնին իրավունքը կամ իրավական նորմը հնարավորության և իրականության միասնություն է, քանի որ արտացոլելով իրականությունը՝ վերջինս իր մեջ ամրագրում է նաև հնարավորը, այլ կերպ ասած՝ պարունակում է ինչպես «գոյության» («сущее»), այնպես էլ «պիտոյի» («должное») օրգանական տարրեր: Այս տեսանկյունից իրավունքը կարող ենք հասկանալ արիստոտելյան պատկերացմամբ՝ իրականության մի դրվագ:

7. Իրավական հնարավորությունների դասակարգման և դրանց առանձին տեսակների բովանդակության վերլուծությունը ցույց տվեց, որ իրավական հնարավորությունները բազմազան և բարդ երևույթներ են, որոնք, այս կամ այն կերպ, փոխկապակցված են, փոխլրացնում են միմյանց և ինչ-որ չափով ազդում են միմյանց վրա, միևնույն ժամանակ, դրանք փոփոխվում և զարգանում են սոցիալական իրականությանը համահունչ:

Իրավական հնարավորության առանձին տեսակներից յուրաքանչյուրի վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել հետևյալը.

Ա) Իրավական հնարավորությունն իրական է միայն այն դեպքում, երբ այն հա-մապատասխանում է սոցիալական իրականությանը, դրա զարգացման միտումներին, ստեղծվում է համապատասխան պայմանների առկայության պարագայում և պայմանավորված է իրավական նախադրյալների անհրաժեշտությամբ:

Բ) Ձևական հնարավորություններն իրավունքում առաջանում են կա՛մ անցումային (տրանսֆորմացիոն) հասարակություններում իրենց ոչ բնորոշ իրավական համակարգերի ներդրմանը պարտադրող հանգամանքների պարագայում, կա՛մ իրավական նորմերի ընդունման և/կամ կիրառման ընթացքում՝ պատահական սխալների և սխալ հաշվարկների պատճառով, կա՛մ էլ որոշակի ուժերի կողմից միտումնավոր՝ պատմական զարգացման ընթացքը չարտացոլող գործողությունների կատարման արդյունքում: Դրանք կտրված են իրականությունից և գոյություն ունեն բացառապես մտքում կամ իրավական ակտերում սահմանված ձևակերպումների մեջ: Ձևական իրավական հնարավորություններ չեն կենսագործվի այնքան ժամանակ, քանի դեռ ամբողջ ծավալով չեն ստեղծվել այն երաշխիքները, նախադրյալները և համապատասխան պայմանները, որոնք անհրաժեշտ են դրանց կենսագործման համար:

Գ) Ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը, ըստ էության, իրական իրավական հնարավորության զարգացման աստիճան է, որի դեպքում անհրաժեշտ իրավական նախադրյալների ծավալը բավարար չէ իրականության վերածվելու համար: Բացակայող իրավական նախադրյալների և համապատասխան պայմանների ստեղծմանը զուգահեռ՝ ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը փոխակերպվում է մասնավոր իրավական հնարավորության, որը, վերածվելով իրականության՝ փաստացի կենսագործվում է:

Դ) Փաստացի իրավական հնարավորությունը, կարծում ենք, պետք է

հասկանալ որպես իրավական երևույթների իրականացման վերջին աստիճան: Ի տարբերություն մասնավոր իրավական հնարավորության, փաստացի իրավական հնարավորության պարագայում առկա անհրաժեշտ իրավական նախադրյալները և համապատասխան իրավական գործողությունները կախված են ոչ միայն իրավունքի կենսագործման ներքին, այլև արտաքին պայմաններից:

Ե) Անհրաժեշտ է այն իրավական հնարավորությունը, որը արտացոլում է սոցիալական իրականության և իրավական պրակտիկայի զարգացման օրինաչափ միտումները: Պատահական է այն իրավական հնարավորությունը, որը հակասում է այդ միտումներին:

Հետազոտությունում կատարված իրավական հնարավորությունների դասակարգումը և դրանց առանձին տեսակների բովանդակության համալիր վերլուծությունը, ցույց տվեց նաև, որ այդ դասակարգումն ունի տեսական և գործնական կարևոր մեթոդաբանական նշանակություն, քանի որ իրավական հնարավորությունների առաձին տեսակների ընտրության և վերլուծության ընթացքում հնարավոր է դառնում անհրաժեշտ խորությամբ պարզելու իրավունքի և օրենքի արդյունավետ կենսագործման իրավական կառուցակարգերը և արդյունքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև իրավաստեղծագործության ընթացքում կառավարելու այդ գործընթացը համապատասխան հասարակական հարաբերություններում՝ առավել արդյունավետ իրավակարգավորման կառուցակարգեր ներդնելու եղանակով:

8. Իրավասուբյեկտության, որպես առանձին իրավական երևույթի շրջանակում առանցքային նշանակություն ունեցող ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության, վերաբերյալ կատարված տեսահիրավական վերլուծությունը հիմք է տալիս առանցնացնել հետևյալ եզրահանգումները.

1) Իրավասուբյեկտությունը՝ որպես հավաքական կատեգորիա, ներառում է իրավունքներ և պարտականություններ ունենալու, դրանք ինքնուրույն իրականացնելու, սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելու ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ: Հետևաբար, իրավասուբյեկտությունը իրավունքի սուբյեկտ լինելու անձի հնարավորությունն (ունակությունն) է՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով, ինչից ելնելով էլ, կարող ենք եզրակացնել, որ «իրավասուբյեկտություն» հասկացության հիմքում ընկած է «հնարավորություն» իրավափիլիսոփայական կատեգորիան: Բացի այդ, գտնում ենք, որ իրավասուբյեկտության, որպես առանձին իրավական երևույթի շրջանակներում կատարված ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության տեսակի վերլուծությունը և համակողմանի բացահայտումը հատկապես կարևորվում է, քանի որ վերլուծության ընթացքում համեմատության և հակադրման միջոցով պատկերավոր ներկայացվեց իրավասուբյեկտության՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության տեսակի և սուբյեկտիվ իրավունքների՝ որպես իրական իրավական հնարավորության տեսակի տարբերությունները:

2) Իրավունակությունը՝ որպես ընդհանուր (վերացական) իրավական

հնարավորություն, իրավունքի իրացման անհրաժեշտ նախապայման է և որևէ կերպ չի կարող նույնացվել սուբյեկտիվ իրավունքների հետ, որոնք իրենց հերթին իրական իրավական հնարավորություններ են և տրված են բացառապես իրավունակությամբ օժտված իրավունքի սուբյեկտներին: Իրավունակությունը և սուբյեկտիվ իրավունքները, ըստ էության, իրավական հնարավորության զարգացման տարբեր փուլեր են, որտեղ սուբյեկտիվ իրավունքը երկրորդ փուլն է:

3) Անկախ նրանից, թե ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունակության որ տեսակի մեկնաբանման դիրքերից ենք ելնում՝ և ընդհանուր, և հատուկ, և ճյուղային իրավունակության ընկալման դեպքում, իրավունքի սուբյեկտը կրում է ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություններ, որոնք այն անհրաժեշտ նախապայմանն են, առանց որի իրավունքի սուբյեկտը չի կարող ձեռք բերել իրավունքի նորմերով նախատեսված համապատասխան իրավունքները և պարտականությունները: Մեր այս մոտեցումը վերաբերելի է ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրավունակության ընկալման վրա:

4) Իրավունակությունը կենսագործվում կամ, այլ կերպ ասած, վերածվում է իրականության իրավագործունակության միջոցով, որը իրավասուբյեկտության երկրորդ փուլը կամ աստիճանն է և բնորոշվում է իրավունքի սուբյեկտի իրավական հասունությամբ: Իրավագործունակության դեպքում նույնպես այն ոչ թե սուբյեկտիվ իրավունքների տիրապետումն է, այլ միայն այդպիսի տիրապետման համար անձի ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը:

9. Սահմանադրաիրավական նորմերի, որպես առանձին իրավական երևույթների շրջանակում առանցքային նշանակություն ունեցող ձևական և իրական իրավական հնարավորությունների վերաբերյալ կատարված տեսաիրավական վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ սահմանադրաիրավական նորմերը անքակտելիորեն և օրգանապես կապված են սոցիալական իրականության հետ, դրանց բովանդակության մեջ առկա իրավական հնարավորությունները ձևավորվում են սոցիալական իրականության մեջ գոյություն ունեցող տարաբնույթ գործոնների ազդեցության ներքո:

Ուստի, քանի դեռ, սահմանադրաիրավական նորմերի ստեղծման և կենսագործման համար ամբողջ ծավալով չեն ստեղծվել իրավական, սոցիալական, քաղաքական, տնտեսական և համապատասխան այլ նախադրյալներ՝ սահմանադրաիրավական նորմերը չեն կարող կենսագործվել և կմնան որպես ձևական իրավական հնարավորություններ: Իսկ սահմանադրաիրավական նորմերի ձևական իրավական հնարավորությունները կարող են վերածվել իրական իրավական հնարավորությունների՝ իրավունքի առանձին ճյուղերում հիմնական օրենքի ընդհանուր դրույթների կոնկրետացման եղանակով: Բացառություն են կազմում այն սահմանադրաիրավական նորմերը, որոնք գործում են անմիջականորեն և դրանով իսկ համապատասխան երաշխիքների, նախադրյալները պայմաններում հանդիսանում են իրական իրավական հնարավորություններ:

10. Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգի հետազոտությունը հիմք է տալիս պնդելու, որ այն ունի բարդ, բազմատարր, բազմաստիճան, և փոփոխական բնույթ, որի բացահայտումն անշուշտ կախված է իրավահասկացողությունից: Անհիմն են բոլոր այն մոտեցումները, որոնք հիմնվելով ձևական, լեգիստական-նորմատիվային իրավահասկացողության վրա, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը դիտարկում են միայն նեղ իմաստով, այն հանգեցնելով պաշտոնապես գոյություն ունեցող, գործող դրական (պոզիտիվ) իրավունքի կամ օրենքի կենսագործմանը հասարակական իրավահարաբերությունների սուբյեկտների վարքագծում՝ դրանց համապարտադիր օգտագործումը, պահպանումը, կատարումը և կիրառումը ապահովելով պետական հարկադրանքով: Սա իր տեղը զիջել է իրավունքի և օրենքի տարբերակման վրա հիմնված հայեցակարգերին, որոնք ելնելով իրավաբանական (նաև խառը) տիպի իրավահասկացողությունից, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը վերլուծում են փիլիսոփայական դիրքերից լայն իմաստով, հաշվի առնելով իրավունքի էությունը, իրավունքի օբյեկտիվ պահանջները, կոնկրետ պատմական միջավայրում առկա պայմանները, ինչպես նաև իրավունքի սուբյեկտների գործուն դերը: Տվյալ իրավահասկացողության կամ իրավունքի և օրենքի տարբերակման մեթոդաբանական դիրքերից իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը ձեռք է բերում նոր բովանդակություն, ինչը մեր մոտեցմամբ բանալի է իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հիմնախնդրի լուծման համար:

11. Հետազոտությունում բազմիցս արձանագրվել է, որ իրավունքը՝ որպես հնարավորություն վերածվում է իրավական իրականության արդյունավետ կենսագործման միջոցով և միայն համապատասխան պայմանների ապահովման և/կամ առկայության պարագայում: Այդ պայմանների ամփոփումը հիմք է տալիս եզրակացնելու.

Հաշվի առնելով իրավահասկացողության մեթոդաբանական մոտեցումը, որի դիրքերից մենք իրականացրել ենք մեր ուսումնասիրությունը, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման առաջին և գլխավոր պայմանը իրավունքի էության կենսագործումն է իրավական երևույթներում, իսկ «իրավական իրականություն» և «իրավական հնարավորություն» կատեգորիաները բնութագրում են իրավունքի էության զարգացման դիալեկտիկան:

Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման երկրորդ՝ ածանցյալ պայմանը համապատասխան իրավական նորմերի կամ օրենքների (որպես իրավունքի էության արտահայտության ձևի) արդյունավետ կենսագործման հիմնախնդիրն է, որը հանգում է, սակայն ամբողջովին չի լուծվում իրավաստեղծագործության ընթացքում՝ իրական, ձևական, ընդհանուր (վերացական), մասնավոր, փաստացի, անհրաժեշտ և պատահական իրավական հնարավորությունների տեսակների տեղին, ժամանակին բացահայտման և դրանց ճիշտ ընտրության միջոցով:

Միաժամանակ, բացի իրավաստեղծ գործունեությունից, իրավական

հնարավորությունների բովանդակության ձևավորման և արդյունավետ կենսագործման վրա կարող են ազդել մի շարք օբյեկտիվ օրինաչափություններ և սուբյեկտիվ գործոններ (օրինակ, իրավունքի սուբյեկտների իրավագիտակցության մակարդակը, տվյալ պատմական միջավայրում առկա հանգամանքները և քաղաքական պահանջմունքները, ինչպես նաև սոցիալական, տնտեսական, հոգևոր, մշակութային և մի շարք այլ գործոններ), որոնք անկախ են իրավաստեղծագործողի կամքից: Բայց և այնպես, իրավունքը հնարավորությունից իրականություն վերածվում է իրավական օրենքում իրավաստեղծագործության ձևով:

Եվ վերջապես, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կարևոր պայման է հանդիսանում իրավունքի սուբյեկտի կամքը, քանի որ երբ և ինչ ծավալով կենսագործել իրավական օրենքը որոշում է բացառապես իրավունքի սուբյեկտը: Հետևաբար, կվերածվի արդյոք իրավունքը հնարավորությունից իրականության, ավարտական փուլում, միայն ու միայն, կախված է իրավունքի սուբյեկտի կամքից:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հնարավորության՝ որպես տեսականի և իրականության՝ որպես փորձնականի փոխհարաբերությունն իրավունքում, Պետություն և իրավունք, N 3 (94), Երևան, 2022, էջ 6-13:
2. Իրավական հնարավորությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները, Պետություն և իրավունք, N 1 (95), Երևան, 2023, էջ 5-11:
3. Իրական և ձևական իրավական հնարավորությունները սահմանադրաիրավական նորմերում, Տարածաշրջան և աշխարհ, N 2 (51), Երևան, 2024, էջ 29-32:
4. Իրավասուբյեկտիվությունը որպես ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն, Պետություն և իրավունք, N 1 (98), Երևան, 2024, էջ 13-22:
5. Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կառուցակարգը իրավահասկացողության հիմնական տիպերի համայնապատկերում, Տարածաշրջան և աշխարհ, N 5 (54), Երևան, 2024, № 4, էջ 45-52:
6. Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանը և իրավունքի կենսագործումը, Տարածաշրջան և աշխարհ, N (58), Երևան, 2025, էջ 41-45:

АСМИК АРМЕНОВНА ЛЕЙЛОЯН

ПРАВОВЫЕ-ФИЛОСОФСКИЕ АСПЕКТЫ ПРЕВРАЩЕНИЯ ПРАВА ИЗ ВОЗМОЖНОСТИ В ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ

Изучение теоретических, практических, гносеологических и методологических проблем, связанных с предметом права, требует применения диалектических категорий как необходимого и важного условия их успешного решения. В рамках данного исследования включены диалектические категории «возможность» и «действительность», поскольку с их помощью становится возможным наблюдать право в движении и четко обозначить процесс превращения теоретического как возможности в практическое как действительность в сфере права. Кроме этого, позволяет выявлять закономерности развития правовых явлений и реалий и, соответственно, разрабатывать пути или методологию укрепления правопорядка, внедрения эффективных механизмов правового регулирования, повышения эффективности применения права и правовых норм, что безусловно относится к актуальным и насущным проблемам общей теории права и государства, а также юридической науки в целом.

Несмотря на то, что понятия «возможность» и «действительность» имеют фундаментальное и методологическое значение для юридической науки, в частности для общей теории права и государства, а также философии права, следует отметить, что в теории права отсутствует комплексное исследование, посвящённое решению проблемы превращения права из возможности в действительность и её различным юридическим и философским аспектам.

Учитывая вышеизложенное, в работе сначала были раскрыты сущность и содержание, гносеологическая природа и особенности понятий «возможность» и «действительность» как философских категорий, находящихся в диалектической взаимосвязи. Проанализированы различные, а в некоторых случаях противоречивые философские определения понятий «возможность» и «действительность», предложенные различными авторами, и в результате сформулированы их широкие и/или узкие определения.

Затем были всесторонне исследованы содержание понятий «возможность» и «действительность» и их взаимосвязи в контексте права и правовых явлений. Ряду понятий, часто отождествляемых с понятием «правовая действительность», был подвергнут сравнительный анализ, и на основе изучения подходов различных авторов предложены новые определения понятий «правовая возможность» и «правовая действительность».

В работе обоснована необходимость и методологическое значение классификации правовых возможностей, выделены виды правовых возможностей, а также изучено содержание и особенности отдельных видов. Был проведён правовой–теоретический анализ отдельных видов правовых возможностей, в частности общих (абстрактных), реальных и формальных правовых возможностей, обладающих ключевым значением, что позволило выявить важные проблемы юридической практики и теории в рамках конкретных правовых явлений. А именно, отдельно рассматривались правоспособность и дееспособность как общие (абстрактные) правовые возможности, субъективные права как реальные правовые возможности, а также уделено внимание вопросу правоспособности (или правосубъектности) юридических лиц как общей (абстрактной) правовой возможности, являющихся субъектами права.

Правовой-теоретический анализ формальных и реальных правовых возможностей был проведен с нескольких аспектов в отношении конституционно-правовых норм, поскольку именно эти виды правовых возможностей имеют важное методологическое значение для конституционного права.

Проанализирована существующая методология исследования механизма превращения право из возможности в действительность, и был выбран методологический инструментарий, который предоставит наибольшие возможности для решения проблемы превращения прав из возможности в действительность. С позиций выбранного методологического инструментария подробно рассмотрен вопрос условия превращения права из возможности в действительность, в рамках которого проанализировано понятие «реализация права» и соответственно выделено и описано условие или условия превращения права.

В работе также проведён подробный анализ некоторых особенностей механизма эффективной реализации/внедрения правового закона как правовой возможности, а также аспектов обеспечения этой реализации.

Диссертация подготовлена на кафедре теории и истории государства и права юридического факультета ЕГУ. Результаты исследования отражены в ряде научных статьях автора, опубликованных в научных журналах и сборниках, определённых Комитетом по высшему образованию и науке Министерства образования, науки, культуры и спорта Республики Армения в период с 2022 по 2025 год. Ряд положений диссертации были представлены диссертантом в рамках докладов и научных докладов, представленных на кафедре.

HASMIK ARMEN LEYLOYAN

THE LEGAL-PHILOSOPHICAL ASPECTS OF TURNING LAW FROM POSSIBILITY INTO REALITY

The use of dialectical categories in the study of theoretical and practical, epistemological and methodological problems related to the subject of law is a necessary and important condition for their successful resolution. The scope of this research includes the dialectical categories of “possibility” and “reality,” as they make it possible to observe law in motion and clearly identify the process by which the theoretical, as possibility, is turning into the practical, as reality, in the sphere of law. Moreover, it allows for identifying the patterns underlying the development of legal phenomena and realities and, accordingly, for designing ways or a methodology to strengthen the legal order, implement effective regulatory mechanisms, or enhance the effectiveness of the application of law and legal norms — issues that are undoubtedly among the current and pressing challenges in the general theory of law and state, as well as in legal science more broadly.

Although the concepts of “possibility” and “reality” hold fundamental and methodological significance for legal science, particularly for the general theory of law and state, as well as the philosophy of law, it should be noted that the theory of law lacks a comprehensive study dedicated to solving the problem of turning law from possibility into reality and its various legal and philosophical aspects.

Taking the above into account, this work first reveals the essence and content, epistemological nature and characteristics of the concepts of "possibility" and "reality" as philosophical categories in dialectical interconnection. The various, and in some cases contradictory, philosophical definitions of the concepts of "possibility" and "reality" proposed by various authors have been analyzed, and as a result, broad and/or narrow definitions of these concepts have been formulated.

Then, the content of the concepts of "possibility" and "reality", and their interrelationships in the context of law and legal phenomena were comprehensively studied. A number of concepts frequently equated with the concept of "legal reality" were subjected to comparative analysis, and, based on the study of various authors’ approaches, new definitions of the concepts of “legal possibility” and “legal reality” were proposed.

The work substantiates the necessity and methodological significance of classifying legal possibilities, identifies their types, and examines the content

and features of each type. A legal-theoretical analysis was conducted on specific types of legal possibilities, in particular, general (abstract), real, and formal legal possibilities of key importance, highlighting the fundamental issues present in both legal practice and theory within the context of specific legal phenomena. Namely, legal capacity and legal capacity to act are considered separately as general (abstract) legal possibilities, subjective rights as real legal possibilities, and special attention is given to the question of legal capacity (or legal personality) as a general (abstract) legal possibility for legal entities that are subjects of the law.

A legal-theoretical analysis of formal and real legal possibilities has been conducted from several aspects within the context of constitutional law norms, as these types of legal possibilities hold significant methodological importance for constitutional law.

The existing methodology for researching the mechanism for turning law from possibility into reality has been analyzed, and the methodological toolkit that will provide the most opportunities for solving the problem of turning law from possibility into reality has been selected. From the perspective of the selected methodological toolkit, the issue of the condition for turning law from possibility into reality has been discussed in detail. Within this framework, the concept of “the realization of law” has been considered and the condition(s) of turning law have been identified and described accordingly.

The work also has included a detailed analysis of some characteristics of the mechanism for the effective realization/implementation of legal norms as legal possibilities, as well as aspects of ensuring their realization.

The dissertation was prepared at the Department of Theory and History of State and Law, Faculty of Law, Yerevan State University (YSU). The results of the study are reflected in a number of scientific articles published by the author, in scientific journals and collections defined by the Committee on Higher Education and Science of the Ministry of Education, Science, Culture, and Sports of the Republic of Armenia between 2022 and 2025. Several provisions of the dissertation were presented by the candidate in the framework of reports and scientific reports presented at the department.